891.99
P-11

19 NOV 2011

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

ԼԱՈ-ՋՈ

ՊԱՏՄՎԱԾՔ

Բ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1930

Հ. Ս. Խ. Հ. ՄՈՊՐԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Публичная Библиотека

13723-57

31347

ՀԱՅՊՈՒՀԳՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 656
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 2946 (բ)
ՏԻՐԱԺ 5000

ԼԱՈ—ՀՈ

Փոքրիկ Լաո—Հոն ուշադրությամբ լսում եր իր հոր և նրա ընկերների տաք վիճաբանությունը:

Հայրը նրան պատվիրել եր գնալ բակը և խաղալ մի փոքրիկ կտոր մարդագետնի վրա և նա վստահ եր, որ Լաո—Հոն գնացել է և իրանց չի լսում:

Բայց Լաո—Հոն չափազանց հետաքրքրված եր իր հոր և նրա ընկերների խորհրդավոր հավաքությամբ: Նրանք հաճախ եյին հավաքվում իրանց տանը և խոսում, վիճում, հայհոյում, զայրանում, հետո համաձայնության գալիս և բաժանվում:

Ցերը հայրը պատվիրեց Լաո—Հոյին դուրս գնալ և խաղալ, նա գնաց, բայց գաղտագողի վերադարձավ և կծկվելով սենյակի անկյունում, սկսեց ուշի—ուշով լսել իր հոր և նրա ընկերների խոսակցությունը:

Սենյակը կիսամութ եր և նրանք չնչմարեցին Լաո—Հոյի նշաձև աչքերի բոցը, որ վառվում եր սենյակի մթին անկյունում:

Փոքրիկ Լաո—Հոյի աչքերի հուրը գնալով ավելի յեր բոցավառվում ներքին անսահման

հետաքրքրությունից դեպի իր հոր և նրա ընկերների խոսակցությունը:

Լաո-Հոյի հայրը և նրա ընկերները չինացի բանվորներ էին, որոնք աշխատում էին Զինաստանի իրենց շրջանում գտնված անգլիական ածուխի հանքերում:

Ամեն անգամ, երբ բանվորները խոսում էին անգլիացիների մասին՝ փոքրիկ Լաո-Հոն սարսափով էր լցվում: Նա անգլիացիներին լավ էր ճանաչում:

Սենյակի մթին անկյունում կծկված՝ նրա սարսափը, ներքին խռովությունն ավելի սաստկացավ, որովհետև իր հայրը և նրա ընկերները պատմում էին, որ անգլիացիները կարող էին իրանց կախ տալ առանց դատարանի, առանց վկաների:

Փոքրիկ Լաո-Հոն իր աչքերով տեսել էր, որ անգլիական հանքերի մի վերակացու մտրակով ծեծել էր իր հորը և նրա ընկերներին: Մտրակի հարվածները չաչել էին իր հոր և նրա ընկերների մերկ թևերի և ուսերի վրա:

Ցերբ որևկան խաչած բրինձը պակասում էր Լաո-Հոյի և իր քույրերի և յեղբայրների համար՝ հայրը անգլիացիներին էր անիծում:

Անգլիացիներն էին ամեն թշվառության պատճառը, նրանք էին, որ կիսաքաղց էին պահում իրանց և հարևաններին:

Լաո-Հոն խորապես հասկանում էր իր հոր անեծքը և լցվում էր ատելությամբ դեպի անգլիացիները, այդ յերկարահասակ, մռայլ,

փոքրիկ, կապույտ աչքերով մարդիկը, որ յեկել էին ոտաբ յերկրից պարզապես իրանց տանջելու:

Լաո-Հոն սարսափում էր անգլիացիներից և միաժամանակ ատամներն էր կրճատցնում ամեն անգամ, որ տեսնում էր նրանց: Ցերբ փողոցում տեսնում էր նրանց՝ սարսափահար աչքերը չռում էր նրանց վրա, որքան նայում էր, ավելի յեր սարսափում, բայց ի վերջո սարսափը փոխվում էր բարկության, որ ծնունդ էր առնում նրա փոքրիկ սրտում, մեծանում և ընդգրկում ամբողջ մարմինը: Այդ փոքրիկ, թուչունի պես վախլիկ յերեխան՝ ուզում էր նետվել մեկն ու մեկի յերեսին և չանդգնել:

Այժմ իր հայրը և նրա ընկերները պատմում էին անգլիացիների մասին, պատմում էին նրանց դաժանությունները:

Լաո-Հոն լսում էր բոցավառ, ատելությամբ բոցավառ աչքերով կիսալույս սենյակի մութ անկյունից:

Ապա խոսակցությունը փոխվեց: Դաժանություններից նրանք անցան դաժանություններին վերջ տալուն: Նրանք խոսում էին գործադուլի մասին:

Մի քանի օր էր, որ Լաո-Հոյի հայրը ածխահանք չէր գնացել: Չէին գնացել և նրա բանվոր ընկերները:

— Ուրեմն գործադուլը դա յեր, մտածեց Լաո-Հոն:

Անգլիական ածխահանքի բանվորները գործադուլ եյին արել: Այդ օրերում Լաո-Հոյի ընտանիքի և հարևանների դրությունն ավելի վատթարացավ: Վոչ թե խաշած բրինձը պակասում եր, այլ բոլորովին չկար:

Լաո-Հոն ականջը սրեց: Գործադուլավոր բանվորները խոսում եյին, վոր անգլիացիները վոստիկաններ եյին բերել գործադուլավորներին բռնի քշելու դեպի ածխահանքերն աշխատեցնելու: Վոստիկանները պետք եր բռնեյին իր հորը և նրա բանվոր ընկերներին, ծեծեյին, սվիններով խփեյին, մինչև անգամ դաշույններով ծակեյին նրանց մարմինները և կախ տային:

Լաո-Հոն ամբողջ մարմնով դողում եր: Բանվորները ծրագիր եյին մշակում վոստիկաններին դիմադրելու, կռվելու նրանց դեմ, չթողնելու, վոր իրանց վոչխարի նման քշեն դեպի ածխահանքերը, մինչև անգլիացի տերերը կատարեն իրենց պահանջները:

Նախօրոք հայտարարված եր գործադուլավոր բանվորներին, վոր յերբ վոստիկանները մտնեն իրենց թաղը՝ կռիվը սկսելու համար ազդանշան կտրվի հենց իրենց, Լաո-Հոյի հոր բնակարանի կտուրից, կարմիր դրոշակ ծածանեցնելով:

Այժմ Լաո-Հոյի հայրը և իր ընկերները վիճում եյին այն մասին, թե՝ ո՞վ պետք եր տար ազդանշանը, վորպեսզի գործադուլավոր

բանվորները սկսեյին կռիվը վոստիկանների դեմ:

Վիճաբանությունը գնալով տաք բնույթ եր ստանում բանվորների միջև:

Վիճում եյին այն մասին, թե՝ ո՞վ եր ամենից հարմարը իբրև դրոշակ բարձրացնող:

Փոքրիկ Լաո-Հոն չեր հասկանում թե ինչո՞ւ եյին վիճում այդ մասին: Չե՞ վոր դրանից ավելի հեշտ բան չկար. ի՞նչ դժվար բան եր: Լաո-Հոն մինչև անգամ ծիծաղեց ներքնապես, ծիծաղեց հեգնելով մեծ-մեծ բանվորներին, վորոնք յերկար վիճում եյին այդ մասին:

— Մեզանից կարմիր դրոշակ բարձրացնողը պիտի լինի այն մարդը, վոր կամ բոլորովին ընտանիքի տեր չե և կամ ընտանիքի քիչ անդամներ ունի, առաջարկեց բանվորներից մեկը:

Բոլորը գլուխները կախեցին: Բոլորն ել ընտանիք ունեյին և ընտանիքի շատ անդամներ, մի քանիսը մի յերկու անդամով ավելի պակաս, քան մյուսները:

Լաո-Հոն ելի գլուխ չընկավ, բայց հեգնական ժպիտն անհետացավ նրա դեղնավուն շրթունքների վրայից: Բնազդաբար զգաց փոքրիկ մանուկը, վոր իր կարծածի չափ թեթև բան չեր կարմիր դրոշակ բարձրացնելը: Նրա աչքերի հուրը ավելի բոցավառվեց, նա սկսեց մտածել այդ մասին: Նա գիտեր, վոր կարմիր դրոշակը կլինի այն դրոշակը, վոր պահարանում իր հայրը պահած եր: Այդ դրոշակը

ծանր չեր։ Ուրեմն ծանրության համար չեր։ Փոքրիկ մանուկն անգամ կարող եր վերցնել։

Վիճաբանությունը շարունակվեց և Լաո-Հոյի համար պարզ լեզվավ ամեն ինչ։ Ուրեմն դրա՞ համար եր։ Նա հասկացավ, վոր դրոշակ բարձրացնողն անպայման կլիներ վոստիկանական գնդակի առաջին զոհը։

Լաո-Հոն սենյակի մթին անկյունում սարսռաց։ Նա պատկերացրեց այն վիճակը, յերբ իր հայրը այլևս չեր լինի այս աշխարհում։ Վայրկենապես պատկերացավ նրա նշաձև, փայլուն աչքերի առաջ իր հոր դիակը, վոր փռված և իրենց բնակարանի կտուրի վրա, մինչև անգամ նրան այնպես թվաց, վոր լսում է իր մոր ողբողորմ լացը, նրան թվաց, վոր իր մայրը գրկել է իրան, քույրերին և յեղբայրներին և լաց է լինում։

Լաո-Հոն սարսափեց և ատելությունից կծեց իր գեղնավուն շրթունքները և կրճատցրեց իր սպիտակ ատամները։

Ծանր հարց եր, վիճում էին գործադուլավոր բանվորները, բայց չէին կարողանում յեղրակացության գալ։

Ամեն մի բանվոր պնդում եր, վոր ինքը բարձրացնի կարմիր դրոշակը, բայց յուրաքանչյուր բանվորի առաջարկը մերժվում եր մյուսների կողմից, նկատի ունենալով յուրաքանչյուրի ընտանեկան դրությունը։

Հանկարծ սկսեց խոսել Լաո-Հոյի հայրը։

Լաո-Հոն դարձավ ամբողջական ուշադրություն։ Կարծես նրա մարմնի ամեն մի մասնիկը մասնակցում եր լսողության, նրա բոբիկ վոտներն անգամ լարված ուշադրությամբ լսում էին հորը խոսքերը։

Հայրը սկսեց ծանր և մռայլ, բայց հաստատուն տոնով։

— Ի՛մ պարտականությունն է, վոր յե՛ս բարձրացնեմ կարմիր դրոշակը, չե՞ վոր դրոշակը պետք է բարձրանա ի՛մ բնակարանի կտուրի վրա։

Բոլորն ել մերժեցին։ Նա շարունակեց բացատրել այն բարոյական պարտքը, վոր ընկնում է իր ուսերի վրա։

— Թույլ տվե՛ք, բացականչում եր նա, վոր յես կատարեմ իմ դասակարգային պարտքը։

Լաո-Հոն սենյակի անկյունից, կծկված, բայց բոցավառ աչքերով, դիտեց հորը և ըզգաց, վոր հայրն ահա բաժանվում է իրանից—մորից, քույրերից, յեղբայրներից և իրանից։ Ուզում եր ձայն բարձրացնել, ճչալ, վազել նրան, բայց մանկական խոր բնազդով զսպեց իրան։

Հանկարծ դրսից լսվեցին աղաղակներ և հարայ-հրոցներ։

Լաո-Հոյի հայրն անմիջապես վազեց դուրս, իսկ մյուսները վազեցին դեպի նեղլիկ լուսամուտը։

Լաո-Հոն տեղիցը չշարժվեց։ Նա անկյունում

նում ավելի կծկվեց, բայց աչքերի հուրն ավելի բոցավառվեց:

Քիչ անց ներս ընկավ հայրը և հայտարարեց.

— Վոստիկանները լցվել են բանվորական թաղը:

— Պետք է բարձրացնել դրոշակը, ասաղակեց բանվորներից մեկը:

Հասավ ահավոր, վճռական բոպեն:

Այսպես թե այնպես պետք էր վորոշելու: Ուրեմն նրանցից մեկն ու մեկին սպասում էր ստույգ մահը:

Կիսախավար սենյակում տիրեց ծանր լռություն: Կարծես ամբողջ մթնոլորտը կապարացավ: Վո՛չ վոք չէր համարձակվում պատռել այդ ահավոր, ծանր, սև լռությունը: Բոլորն էլ չռած աչքերով նայում էին կարծես տարածության մեջ:

Լաո-Հոյի հայրն էր, վոր պատռեց լռությունը:

— Պետք է բարձրացնել կարմիր դրոշակը, թույլ տվե՛ք կատարեմ իմ պարտականությունը:

Լռություն, ծանր լռություն:

— Կարմիր դրոշակ պետք է բարձրացնել, ասաղակեց Լաո-Հոյի հայրը, բանվորներն ըսպասում են:

Բար լռություն:

Լաո-Հոյի հայրը հանկարծ զգաց, վոր լռությունը համաձայնության նշան է: Անմիջապես վազեց դեպի պահարանը կարմիր դրոշակը վերցնելու: Վո՛չ վոք նրան չէր դիտում, ամեն մեկը աչքերը չռել էր վորոշ ուղղությամբ:

Դրոշակը չկար:

— Ո՞վ է վերցրել կարմիր դրոշակը, նյարդային բղավեց Լաո-Հոյի հայրը: Վո՛չ մի պատասխան: Նա վազվզեց դես-դեն, ջղաձգությամբ և համառորեն վորոնեց դրոշակը: Զըկար ու չկար:

Հանկարծ դրսից լսվեց հրացանների վոլոտ:

Դրսում կռիվն սկսել էր անգլիական ածխահանքի տերերի կողմից վարձված վոստիկանների և գործադուլավոր բանվորների միջև:

— Բանվորներն սկսել են կռվել մինչև անգամ առանց ազդանշանի, ցասումով հայտարարեց Լաո-Հոյի հայրը: Դուք ինձ չթողիք, վոր ժամանակին բարձրացնեի դրոշակը:

Բոլորը լռեցին: Իրավունք ուներ նա:

— Այժմ մեզ մնում է աճապարել դեպի կռիվը:

Բոլորն էլ շարժվեցին:

Հանկարծ դրսից լսվեց Լաո-Հոյի մոր լացն ու կոծը: Նա ներս ընկավ Լաո-Հոյին գրկած:

Լաո-Հոյի ճակատից վազում էր աղ-կարմիր արյուն: Նա ձեռքում բռնել էր կարմիր դրոշակը:

Լաո-Հոն դեռ վողջ եր:

Հայրը գրկեց նրան.

— Լաո-Հո՛, ի՞նչ պատահեց քեզ...

— Կտուրի վրա կարմիր դրոշակ բարձրացնելիս՝ խփեցին ինձ, պատասխանեց փոքրիկ հերոսը և փակեց աչքերն ընդմիշտ:

Հայրը համբուրեց նրա արյունաթաթախ ճակատը, դրեց մոր գրկում և արյունով ներկված շրթունքներով աճապարեց դեպի փողոց:

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

ՀՀ Ազգային գրադարան
NL0333306

31347

ԳԻՆԸ՝ 5 ԿՈՊ.